ԿՈՎԿԱՍԻ ՌԱԶՄԱԲԵՄԻՑ ՌՈՒՍԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՀԵՌԱՆԱԼԸ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՈՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ս.Մ.ՍՏԵՓԱՆՅԱՆՑ

1917թ. հոկտեմբերի 25-ին Ռուսաստանում տեղի ունեցավ հեղափոխություն, իշխանությունը գրավեց բոլշևիկյան կուսակցությունը: 1917թ. դեկտեմբերի 29-ին ժողկոմխորհի նախագահ Վ.Լենինը ստորագրեց «Թուրքահայաստանի մասին» դեկրետը: Այս օրենքը առաջին հայացքից լավ տպավորություն էր թողնում. Արևմտյան Հայաստանի ինքնորոշման իրավունքը, հայ փախստականների վերադարձը Հայրենիք և այլն: Դեկրետում ոչ մի խոսք չէր ասվում այն մասին, թե ով պետք է կյանքի կոչի նրա դրույթները: Եթե իրենք՝ տանջված և սոված հայերը, այդ դեպքում դեկրետը անհնարին էր իրագործել:

Ռուսական զորքերը շարունակում էին թողնել Պարսկաստանի, Արևմտյան Հայաստանի և Անդրկովկասի տարածքները: 1917թ. նոյեմբերին արդեն հատուկ կերպով նշվեց Կովկասյան ռազմաճակատի փլուզումը և ռազմաճակատի հրամանատար, գեներալ Մ.Ա. Պրժևալսկին արդեն ոչ մի բան անել չէր կարող: Հեռացող ռուսական զորքերը ցանկանում էին Թիֆլիս-Բաքու երկաթգծով մեկնել մինչև Կենտրոնական Ռուսաստան, սակայն Շամխոր, Դալյալ, Դալ-Մումետլի կայարանների մոտ ազերիների կողմից ենթարկվեցին հարձակման: Էվակուացված զորամասերի կազմում էր նաև ռուսական էքսպեդիցիոն կորպուսը, որը Թուրքերի դեմ կռվել էր Պարսկաստանի տարածքում: Կովկասյան ռուսական բանակի կազմում կային շատ թվով հայկական զինվորական մասեր: Հենց դա էլ պատճառ դարձավ, որ Հյուսիսային Պարսկաստանի հայկական գյուղերի վրա սկսեցին հարձակվել տեղի ազերիների ավազակախմբերը:

Պարսկաստանից ռուսական բանակի նահանջի հետ կապված՝ 1916թ. օգոստոսի սկզբին նման մի իրավիճակում էր հայտնվել Սպահանի և Նոր Ջուղայի 40 հազարանոց հայ ազգաբնակչությունը: Թուրքական և քրդական ավազակախմբերը մոտեցել էին Ջուղային և միայն սպասում էին ռուսական բանակի գնալուն, որպեսզի ներխուժեն քաղաք և հայ ազգաբնակչության կոտորած կազմակերպեն: Տեղեկանալով վերոհիշյալի մասին՝ Գևորգ Ե կաթողիկոսը օգստոսի 8-ին հեռագրով դիմեց Կովկասի փոխարքա մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչին, որը պատասխանեց, թե քանի դեռ Սպահանում է գտնվում ռուսական ջոկատը, ինքը բոլորին հավասարապես պետք է պաշտպանի, և որ իր հետագա քայլերը կախված են կորպուսի հրամանատար, գեներալ Բարատովի գործողություններից: Եթե հայերը վախենում են Սպահանում մնալուց, նրանք կարող են գավառ մեկնել, ուր կա անգլիական ջոկատ, որը նրանց անպայման կօգնի[1]:

---

[1] *Հայաստանի Հանրապետության պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊՊԿԱ), ֆ. 57, ց. 2, գ. 1306, թ. 30:*

1918թ. հունվարի 13-ին Էջմիածնում Թավրիզից Ներսես եպիսկոպոսից հեռագիր ստացվեց, ուր տագնապով հաղորդվում էր, որ Ղարադաղի հայկական երեսուն գյուղերի դրությունը սարսափելի է: Խաները վայրագություններ են անում, և կաթողիկոսից խնդրվել էր միջնորդել Պարսից շահի առջև՝ Ղարադաղի խաներին սանձահարելու և պատժելու համար:

Այս նույն օրը Գևորգ Ե կաթողիկոսը հեռագիր ուղարկեց Պարսից շահին, ուր մասնավորապես գրում էր. «Թեհրան. Նորին մեծություն Պարսից շահին. Ատրպատականի առաջնորդ Ներսես եպիսկոպոսի հեռագրական զեկուցման համաձայն, Ղարադաղի հայոց երեսուն գյուղի դրությունը ծանր և վտանգավոր վիճակի մեջ է: Խաները կողոպտում, սպանում են իմ ժողովուրդը, հրկիզում նոցա ունեցվածքը:

Ձերդ մեծության բարձր հովանավորությունն եմ հայցում Ղարադաղի հայության վրա՝ խնդրելով սանձել խաների անհանդուրժելի ապերասանությունները, զսպել նոցա, պատժել և հրամայել արդարություն, վերադարձնելով կողոպտված հողերը հայերին, որոնք միշտ վայելել են Ձերդ մեծության բարձր շնորհները»[3]:

Այդ նույն ժամանակ Ներսես եպիսկոպոսի նախաձեռնությամբ Ատրպատականի հայերի պաշտպանության համար կազմավորվում էր Սալմաստի հայկական գումարտակը, որի համալրման համար նա Թիֆլիսում գործող հայկական զինվորական խորհրդից պահանջեց Երևանից ուղարկել 400 զինվոր: Դեռ լիովին չկազմավորված գումարտակի շտաբը Ներսես սրբազանը կենտրոնացրեց Թավրիզում, իսկ վաշտերը՝ Սալմաստում, Բաշկալիում և այլ հայաշատ վայրերում[4]:

1918թ. հունվարի 26-ին Մակվի խան Մուրթուզա-Ղուլի-Սարդարը, որպեսզի ինչ-որ ձևով արդարացնի իր հակահայկական քաղաքականությունը, Մակու քաղաքի հայ քահանայի և միլլաթ-բաշի ուստա Հայրո Բարեյանի միջոցով Վեհափառ հայրապետին նամակ ուղարկեց՝ պահանջելով, որպեսզի վերջինս «արգելք հանդիսանա, որ ռուսական զորքն ու կամավորները Մակվի խանություն մտնեն և այնտեղից սահման անցնեն»[5]:

Ունկնդրելով Մակվի խանի նվիրակներին՝ Գևորգ Ե-ն զարմացավ, որ այս խնդրով դիմում են իրեն՝ հայ ազգի հոգևոր պետին, և իր դիվանին հրամայեց պատասխանել խանի այս ավելի քան անհասկանալի պահանջին, ինչը դիվանը չհապաղեց կատարել: Դիվանի գրության մեջ մասնավորապես ասված էր. «Ի նկատի ունենալով Ձեր հարուցած խնդրի զուտ ռազմաքաղաքական բնույթը, ինչպիսի խնդիրները չեն մտնում Նորին սրբության գործունեության շրջանի մեջ, ուստի այդ խնդիրը կուղարկվի պատշաճ իշխանությանց: Երբ նոցա պատասխանը կստացվի, այդ նկատմամբ Ձեզ տեղեկություն կհաղորդվի»: Այնուհետև դիվանը գրում էր. «Դիվանը Նորին Սուրբ Օծության կարևոր ուշադրությունը դարձնելով Ձեր հավաստիացումներին, ինչպես Ձեր խանության շրջանում ապրող հայ ժողովրդի մարդասեր հովանավորի, կատարյալ հույս ունի, որ ապագայում հայերը ևս կվայելեն Ձեր հովանավորությունը, և նոցա վստահություն կտրվի, որ

[2] Նույն տեղում, ց. 5, գ. 172, թ. 1:
[3] Նույն տեղում, թ. 2:
[4] Նույն տեղում, ֆ. 121, ց. 2, գ. 65, թ. 1 - 5, գ. 116, թ. 1 - 5:
[5] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 173, թ. 1:

խաղաղ կյանք վարեն իրենց դարավոր հարևանի՝ պարսիկ ժողովրդի հետ, դնալի որը հայ ժողովուրդը անկեղծ համակրություն և բարիդրացիական զգացումներ է տածում դարերից ի վեր, որի մասին և աղոթում է Նորին սրբություն, ինչպես և Ձեր բարօրության մասին»[6]:

Փետրվարի 3-ին Մայր Աթոռի դիվանը Թիֆլիս՝ Հայոց Ազգային Խորհրդին ուղղեց իր թ. 205 գրությունը, ուր մանրամասնորեն նշելով Մակվի խանի պահանջի մասին՝ թախանձեց, «որպեսզի, իրազեկ լինելով խնդրին, զննության առնվի» այն[7]:

Սակայն Մակվի խանի կողմից Ղարադաղի հայերի նկատմամբ ոտնձգության վտանգը չէր անցել, և Գևորգ Ե-ն, մտահոգվելով տեղի հայության հետագա ճակատագրի մասին, Պարսկաստանի շահից օգնություն խնդրեց: 1918թ. փետրվարի 7-ին Պարսկաստանի արտգործնախարար Մուշավեր-կուլ-Մամելիքի հեռագրով, շահի կողմից երաշխավորվում էր Ատրպատականի հայերի անվտանգությունը[8]: Այս խոստումները ավելի շատ նման էին պարծենկոտության: Շուտով Թավրիզից ստացված հեռագրում ասված էին միայն մի քանի ողբերգական խոսքեր. «Մակվի խանության հայությունը ենթարկվեց աղետի: Թուրք ասկյարները և տեղի ավազակախմբերը հարձակվեցին հայկական խաղաղ գյուղերի վրա»[9]:

Իրապես Պարսկաստանում քաոս էր տիրում: Պարսկաստանի կենտրոնական իշխանությունները կորցրել էին երկիրը կառավարելու լծակները:

1918թ. փետրվարի վերջին – մարտի սկզբին Պարսկաստանում քաղաքական իրավիճակի մասին վեհափառին ուղղված իր թ. 21 գրությունում այդ մասին վկայում էր Համադանի և Սուլթանաբադի առաջնորդական փոխանորդ Խ. վարդ. Լազարյանը. «...Պարսկաստանում ևս դրությունը օր ըստ օրէ վատանում է: Կառավարությունը կորցրել է յուր նշանակությունը և ազդեցությունը: Համատարած սովը կարող է պատճառ դառնալ անիշխանության ծավալման և թալանների: Շատ վայրերում կազմված են մեծ ավազակային խմբեր, որոնք թալանում և կողոպտում են խաղաղ ազգաբնակչությանը: Նախքան Պարսկաստան գալը, մոտ 2000 հոգուց կազմված մի ավազակախումբ կողոպտեց երեք հայաբնակ գյուղեր՝ Բուրվայի հայաբնակ գավառում՝ Գովզ, Սանգոֆիտ և Խաքբաղ՝ այրելով տները: Խեղճ գյուղացիները ձմռան ցրտերին ցրված են հայաբնակ գյուղերում, իսկ մի մասը գաղթել է Թեհրան: Ավազակային խումբը ցրելու համար խնդրեցի բախտիարցի խանների աջակցությունը: Եղած դիմումների հիման վրա կառավարությունը արտոնեց բախտիարցիներին՝ ցրելու ավազակախումբը, որին հետապնդելու համար ուղարկված են բավականաչափ ձիավորներ:

Ռուսական զորքը բոլորովին թողնում է Պարսկաստանը, որը և լուրջ մտահոգություն է պատճառում: Ռուսներին ուզում են փոխարինել անգլիացիք, որոնք... Բաղդադից զորք են բերում Պարսկաստան, որի արևելյան սահմանը Մեղխեր-Խորասան, մինչև Բելուջիստան բռնված է

---

[6] Նույն տեղում, թ. 4:
[7] Նույն տեղում, թ. 7:
[8] Նույն տեղում, գ. 172, թ. 4:
[9] Նույն տեղում, գ. 173, թ. 8:

արդեն անգլիական զորքերով: Զորք է բերված նաև Քիրմանշահ և մասամբ Համադան: Պարսիկ հայրենասերները, այդ հանգամանքը համարելով խախտում պարսիկ կառավարության չեզոքության, գրգռված են, և սպասվում են մեծ ցույցեր... և զօրեղ ընդհարումներ (անգլիացիների հետ)»[10]:

Ադրբեջանում նույնպես անհանգիստ էին՝ ինչպես Բաքվում, այնպես էլ հայ-թուրքական խառն ազգաբնակչության բնակավայրերում: Ադրբեջանում հապճեպ կազմավորվում էին թուրք-ազերիների (թաթարների) զինվորական մասեր՝ թուրք սպաների հրամանատարությամբ: Թուրք ավազակախմբերին դիմադրելու համար Բաքվի և Ելիզավետպոլի նահանգների տարածքում սկսեցին կազմավորվել հայկական զորամիավորումներ: Բաքվում կուտակված էին 8 հազարի չափ զինված հայ զինվորներ՝ եկած Արևմտյան և Կովկասյան ռազմաճակատներից, որոնք ցանկանում էին գնալ իրենց հայրենի վայրերը, սակայն խուսափում էին թաթարական ազգաբնակչության հարձակումներից:

Ազգամիջյան ընդհարումներ հրահրողների թվում էր նաև Անդրկովկասյան մահմեդականների հոգևոր առաջնորդ, «խաղաղասերի» կոչում վաստակած մուֆտի Մուտաֆա էֆենդին: Շամախիի հայոց թեմի առաջնորդ Բագրատ եպիսկոպոս Վարդազարյանը, Գևորգ Ե կաթողիկոսին իրազեկ պահելով Շամախիում տիրող ռազմաքաղաքական դրության մասին, մուֆտիի մասին գրում էր հետևյալը. «...նա գլխավոր կողմնակիցն ու ջերմ աշխատողն էր տաճկական տիրապետության արագացմանը, որի համար աշխատում էր գաղտնի ու հայտնի միջոցներով զինել թուրք ժողովրդին ու զինվորներին»[11]:

Մեկ ուրիշ գրությունում՝ ուղղված Անդրկովկասյան սեյմի զինվորական ներկայացուցիչ Լևոնյանին, Բագրատ սրբազանը գրում էր, որ Շամախիում մահմեդականները հարց էին բարձրացրել տեղի կայազորի մեջ, ուր ծառայում էին հայ և մոլոկան զինվորները, մտցնել թաթար միլիցիոներներին և կայազորի պետ Արտամոնովին փոխարինել թուրք պաշտոնյայով: Դրան հայերը կտրկանապես դեմ եղան: Դա պատճառ դարձավ, որ շրջակա գյուղերից մեծ քանակությամբ զինված թաթարներ եկան՝ ցանկանալով հարձակվել հայոց թաղի և կայազորի վրա: Սակայն հարձակումը տեղի չունեցավ, և կողմերը համաձայնվեցին բանակցել: Թաթարների կողմից բանակցություններին մասնակցեցին մուֆտին, գավառական կոմիսար Ազատ բեկը, քաղաքագլուխ Թիմուր բեկը, գավառական գործադիր կոմիտեի նախագահ Ասաֆ բեկը, թաթարական ազգային միլիցիայի պետ Շիրին բեկը և Բեդալ բեկ Յոլչիևը, իսկ հայերից, մոլոկաններից և կայազորից մի պատգամավորություն՝ Բագրատ եպիսկոպոս Վարդազարյանի գլխավորությամբ: Թաթարները բավական գրգռիչ դիրք էին բռնել՝ ցանկանալով կայազորը իրենց ձեռքը վերցնել: Ռազմաճակատի ծանր վիճակը նկատի առնելով՝ հայերը վնասակար համարեցին թիկունքում ևս ստեղծել բարդություն, որը կհանգեցներ ազգամիջյան ընդհարման, և ստիպված եղան համաձայնվել, որ Շամախիի կայազորը կազմվի 250

---

[10] Նույն տեղում, գ. 174, թ. 11:

[11] Գ.Ս.Ստեփանյան, Նուխի և Արեշ գավառների հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանությունը 1918 - 1920 թթ., ատենախոսություն, Ե., 1996, էջ 56, տե՛ս նաև ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 6:

զինվորանոց վաշտից, կեսը՝ քրիստոնյաներից, իսկ մյուս կեսը՝ մահմեդականներից:

Ադրբեջանի թաթարական բանակի ստեղծմանը օգնում էին թուրք սպաները: Ինչպես նշում էր Բաքվի եպիսկոպոսը, «Բաքվից և այլ տեղերից հաճախ գալիս են տաճիկ ագենտները, էմիսարները՝ իհարկե գրգռելու նպատակով և համոզում ներշնչելու այստեղի թուրքերին, որ շուտով տաճիկները Կովկաս են մտնելու: Փաստեր շատ կան: Այս թուրքական ուժը թիկունքում բավական կասկածելի ու վտանգավոր է հատկապես հայերի համար»[12]:

Հենց այս պատճառով տեղի հայությունը, Շամախիում գտնվող հայ զինվորականներից կազմակերպելով զինվորական հանձնաժողով, որոշեց կովկասյան իշխանության առջև միջնորդել՝ թույլատրելու Շամախի գավառի հայկական մեծ գյուղերում կազմել հայկական պահեստի գումարտակ՝ ի հակակշիռ թուրքերի: Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը 1918թ. փետրվարի 19-ի նիստում որոշեց կազմել մեկ գումարտակ, որը պետք է մտներ Բաքվի գնդի մեջ:

1917թ. դեկտեմբերից ծանրացել էր նաև Գանձակի պաշարված հայության վիճակը: 1918թ. մարտի 13-ին Գանձակի փոխանորդ Լևոն վարդ. Պսերյանը նամակ ուղարկեց Մայր Աթոռի դիվանապետ Տիրայր եպիսկոպոսին, ուր մասնավորապես, գրում էր. «Վերջապես, բացվեց փոստային հաղորդակցությունը, և դրսի աշխարհից լույս ընկավ Գանձակ, որը դեկտեմբերի կեսերից պաշարված դրություն ուներ, նախ մասամբ, ապա ընդհանուր պաշարողության: Ամեն կարգի և աստիճանի պակասությունների վրա ավելացավ և պաշարված քաղաքում ապրելու բավականությունը չդյուրացող երազանքի ներքո:

Այժմ խաղաղ է, այսինքն չկա հրացանաձգություն և դա շնորհիվ այն հանգամանքի, որ Թիֆլիսից եկավ պատգամավորություն՝ հանձին Ա.Սահակյանի, Գ.Եվանգուլյանի, մի վրացու ու թուրքերի, որոնք խաղաղություն ձգելու միջոց համարեցին 219 գնդի շորեղենները հանձնել թուրքերին և այս երկու օր է 5 - 8 վագոն կրում են շորեղենները, և հայերը արգելք էին լինում: Այժմ երկաթուղու երթևեկությունը ևս պիտի վերականգնվի, գոնե այդ թուրքերը խոստացել են անելու...

Դիվանիդ պատասխանեցի, որ իմ հեռագրով Վեհդ թույլտվություն է խնդրում պատերազմի դաշտը երթալու համար. ...Վերջին դեպքերը չափազանց ծանր են կռվի դաշտում: Թողնում եմ Վեհի կատարյալ կամքի տնօրինության: Հեռանալով այստեղից, ինքս բարիք արած կլինեի, թեև արդեն մտադիր եմ հեռանալ բոլորովին»[13]:

1918թ. ամռանը Ադրբեջանի հայերի վիճակը հուսահատական դարձավ: Կոտորածի սպառնալիքի տակ Գանձակ եկավ շրջանի հայության մի դանգված՝ ինչպես Դաշտային Արցախից, այնպես էլ Արեշից և Նուխիից: Մեկ ուրիշ զեկուցագրում՝ ուղղված Մայր Աթոռին, Լևոն վարդ. նշում է. «Մեր կացությունը նախկինից վտանգալից է. մանավանդ Ղարաբաղի թեմից Գանձակին միացած 16 գյուղերինը, որոնց վրա Ղարաբաղը յուր

[12] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 222, ց. 1, գ. 105, թ. 1 - 3:

[13] Մ.Մաշտոցի անվան Մատենադարան, Տիրայր վարդապետի արխիվ, թղթ. 134, վավ. 36:

իշխանությունն է տարածում: Մյուս կողմից, նոքա այնքան մոտ են Գանձակին, 50 - 60 վերստ , որ Ադրբեջանի կառավարությունը դյուրությամբ կարող է Բեյուք-Վեղի ստեղծել: Հնարավոր դիմումները արել եմ և անում եմ, սակայն կացությունը մնում է սպառնալից:

Բաքվի և Գանձակի հայությունը եղել է Բարդուղիմեոսյան գիշերի վտանգի մեջ, սակայն անգլիական սպառնալիքը և ձեռք առնված միջոցները կանխվեցին՝ միջամտությամբ նախարարապետի»[14]:

1918թ. սեպտեմբերին թուրքական զորքերը Նուրի փաշայի հրամանատարությամբ գրավեցին Բաքուն և սկսեցին տեղի հայության կոտորածը: Շամախիի թեմի առաջնորդ Բագրատ եպ. Վարդազարյանը, Գևորգ Ե կաթողիկոսին հայտնելով Բաքվում տեղի ունեցած իրադարձությունների մասին, մասնավորապես գրում էր. «Զորքերը Բաքու մտնելուց հետո սկսում են սոսկալի կոտորած. գազանությունը և թալանը շարունակվում է երեք օր»[15]: Երեք օրվա ընթացքում կոտորվեց շուրջ 30000 հայ, որոնց մեջ էին նաև Շամախիի, Գյոքչայի և մասամբ Արեշ գավառի այն հայերը, որոնք 1918թ. հունիս-հուլիս ամիսներին նահանջող զորքի հետ միասին գաղթել էին Բաքու:

Թուրք-թաթարական զորքերը և ամբոխը կողոպտել էին Բաքվի բոլոր հայոց եկեղեցիները՝ Ս.Լուսավորիչ, Ս.Թադեոս և Ս. Բարդուղիմեոս, Ս.Թարգմանչաց և Սաղիանի վանքը: Թալանվել էին եկեղեցական անոթներ, զգեստներ, արծաթե գոտիներ, խաչեր, բուրվառներ, կնքավազաններ, մոմակալներ, ոսկե մասնատուփեր, խաչվառներ և այլն:

Բաքվի կողոպտված եկեղեցիների վնասների գումարները հետևյալն էին.

1. Ս.Լուսավորիչ եկեղեցու՝ 270.920 ռ.
2. Ս.Թադեոս և Բարդուղիմեոս եկեղեցու՝ 78.740 ռ.
3. Ս.Թարգմանչաց եկեղեցու՝ 37.740 ռ.
4. Սաղիանի վանքի՝ 56.000 ռ.

կողոպտվել էր նաև Դերբենդի հայոց եկեղեցին[16]:

Գավառներում ևս վայրագություններ տեղի ունեցան ինչպես խաղաղ հայ ազգաբնակչության, այնպես էլ հոգևորականության ներկայացուցիչների նկատմամբ: Նուխի և Արեշ գավառների գործակալ Եղիշե քահ. Մելիք-Ջահանյանը, նկարագրելով Մեծ ու Փոքր Սոկուլթլու գյուղերում թուրք-մուսավաթական ոճրագործությունները, նշում էր. «...Նախ բռնեցին Մեծ Սեկյուլթլիի 115 տարեկան ծերունի Սարգիս քահանա և Ներսես քահանա Տեր-Հովհաննիսյանին, նրանց հետ և գյուղերի բոլոր առաջավորներին և գյուղից հանելով՝ սպանեցին: Նրա հետևյալ օրը, հավաքեցին գյուղի երիտասարդներին և տանելով գյուղից մի քանի վերստ հեռու, սկսեցին հրացանազարկ անել...»[17]:

Ադրբեջանի հայության համար այս ծանր և ճակատագրական օրերին Շամախիի թեմի առաջնորդ Բագրատ եպիսկոպոսը, չլքելով իր հոտը, նրա հետ կիսեց բոլոր դժվարությունները:

---

[14] Նույն տեղում, վավ. 139:
[15] Գ.Ստեփանյան, նշվ. աշխ., էջ 16, տե՛ս նաև ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 8:
[16] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 185, թ. 1:
[17] Գ.Ստեփանյան, նշվ. աշխ., էջ 167, տե՛ս նաև ՀՀՊՊԿԱ, ֆ. 276, ց. 1, գ. 12, թ. 5:

1918թ. մարտի կեսերին դրությունը խիստ լարված էր նաև Արևելյան Հայաստանի տարածքում: Մարտի 22-ին Բջնի գյուղի մոտակայքում տեղի ունեցան հայ-թաթարական ընդհարումներ: Իմանալով թուրքական բանակի առաջխաղացման մասին՝ Արևելյան Հայաստանի գավառական թաթարական ազգաբնակչությունը քաջալերվելով հարձակվեց հարևան հայկական գյուղերի վրա: Հակահարված ստանալով՝ թաթարները տեղի մահմեդական խորհրդի անունից օգնության դիմեցին Վեհափառ հայրապետին: Գևորգ Ե կաթողիկոսի կարգադրությամբ և Երևանի Ազգային խորհրդի աջակցությամբ թաթարներին բնակեցրին Երևանից ոչ հեռու գտնվող Թազաքենդ գյուղում: Սակայն, ինչքան էլ տարօրինակ էր, թաթարներին պաշտպանության եկան ոչ թե իրենց բարեկամները Ադրբեջանից, այլ Զնչնիայի և Դաղստանի մահմեդականների առաջնորդ, ինքնակոչ իմամ Նաշմուդին Գոցինսկին, որը մարտի 27-ին Պորտ Պետրովսկ նավահանգստից ուղարկեց անչափ տարօրինակ մի հեռագիր, ուր մասնավորապես գրում էր. «Խնդրում եմ, Անդրկովկասյան սեյմին տեղյակ պահել, որ հայկական զորքերի կողմից վրդովիչ բռնությունները, որոնք տեղի են ունենում Երևանի նահանգի անպաշտպան մահմեդականների նկատմամբ, առաջացնում են Դաղստանի և Հյուսիսային Կովկասի սարեցիների խորը զայրույթը: Խուսափելով բոլոր ծանր բարդություններից՝ խնդրում եմ, ընդունել կտրուկ միջոցներ՝ անհապաղ դադարեցնելու թալանը և անկարգությունները»:

Մարտի 29-ին Մայր Աթոռի դիվանապետ Տիրայր վարդապետը թ. 189 հեռագրով պատասխանեց իմամին հետևյալը. «Նորին սրբությունը հոգեկան խոր վշտով իմ միջոցով ստիպված է հաղորդել, որ Անդրկովկասի մահմեդականները, սիստեմատիկ փչացնելով ստրատեգիական նշանակություն ունեցող ճանապարհները, զորքի և խաղաղ ազգաբնակչության վրա հաճախակի հարձակումներով խանգարում էին հայրենիքի պաշտպանության գործը... ինչը և հարուցեց հայ ժողովրդի արդարացի զայրույթը:

Նորին սրբության անունից խնդրում եմ կատարել բոլոր ձեզանից կախված միջոցները և աղղել մահմեդական ժողովրդի վրա, որպեսզի հետագայում նման գործողություններ չկրկնվեն, ինչով Դուք կաջակցեք երկրամասը խաղաղեցնելու գործին՝ դրանով իսկ հանգստության և նորմալ հարաբերությունների հաստատմանը հայերի և մահմեդականների միջև»[18]:

Հայ ազգաբնակչությանը հանգստացնելու, փորձանքից և ազգամիջյան ընդհարումներից հեռու պահելու համար, որոնցում միշտ երկու կողմն էլ զոհեր են տալիս, Գևորգ Ե կաթողիկոսը հռչակեց երկու կոնդակ: Առաջինով՝ 1918թ. ապրիլի 10, թ. 312, նա դիմեց Թիֆլիսի թեմի հայոց ժողովրդին, երկրորդով՝ ապրիլի 24, թ. 354, Երևանի թեմի հայ ժողովրդին, ուր խաղաղության կոչ էր անում ի սեր «զչինուլթեան Հայրենեաց մերոց»[19]:

---

[18] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 2, գ. 481, թ. 6 - 10:
[19] Նույն տեղում, թ. 12:

УХОД РУССКИХ ВОЙСК С КАВКАЗСКОГО ТЕАТРА ВОЕННЫХ ДЕЙСТВИЙ И ИЗМЕНЕНИЕ СИТУАЦИИ В ЗАКАВКАЗЬЕ И ИРАНЕ

С.М.СТЕПАНЯНЦ

Резюме

События, имевшие место на территории Армении, Азербайджана и Северного Ирана сразу же после Октябрьской революции 1917г. и ухода русских войск из Закавказья, впервые рассматриваются под углом участия в них представителей армянского духовенства и Первопрестольного Эчмиадзина. Позиция армянского духовенства во время наступления турок в 1917 – 1919гг. на Закавказье, взятия ими Баку и в период армяно-татарских столкновений способствовала сохранению нации.